



ՅՄ 22.03.2017
Կայ: 12417435

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՅ**

«02» Տարբի 2017 թ.

№ 65-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՅԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N1417-Ն
ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 4-ի «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների վերաբերյալ հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարի 2000 թվականի հոկտեմբերի 20-ի N02/1291 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1417-Ն հրամանում կատարվող փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2017 թվականի հունվարի 1-ից հետո ընկած հաշվետու ժամանակաշրջանների վրա:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համաձայնեցված է

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարության հետ

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահի



2017թ.

2017 թվականի Տարբեր 2 -ի

N 65 - Ն հրամանի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի
«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ
ՈՐՈՇ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2000 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 02/1291 ՀՐԱՄԱՆՆ ՈՒՔԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
N1417-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Հրամանով հաստատված հավելվածի՝

1) N1 ձևի՝ ակցիզային հարկի հաշվարկի 5-րդ կետի աղյուսակի 5.6-րդ սյունակում
«Մեկ լիտրի բացթողման գինը» բառերը փոխարինել «Բաց թողման գինը կամ
առավելագույն մանրածախ գինը» բառերով,

2) N1 ձևի՝ ակցիզային հարկի հաշվարկի լրացման կարգի 9-րդ կետի 3-րդ
ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3) [5.5] սյունակը լրացվում է միայն ԱՏԳ ԱԱ 2207 և 2208 ծածկագրերին դասվող
ապրանքների համար, իսկ [5.6] սյունակը՝

ա. ԱՏԳ ԱԱ 2203, 2204, 2205, 2206, 2207, 2208 և 271019710 ծածկագրերին
դասվող ապրանքների համար՝ լրացնելով դրանց բացթողման գինը (առանց
ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գումարների)՝ վերածած մեկ լիտրի
կամ օրենքով սահմանված դեպքում՝ մեկ կիլոգրամի,

բ. ԱՏԳ ԱԱ 2402 20 90011, 2402 20 10011, 2402 90 00013, 2402 20 90012, 2402 20
10012 և 2402 90 00014 ծածկագրերին դասվող ապրանքների համար՝ լրացնելով
դրանց տուփի վրա մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ
գինը (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի գումարների)՝
հաշվարկված 1000 հատի համար,»: